ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ———————— 2013թ. N_____-Ա

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի «Երևան քաղաքային համայնքին գույք նվիրելու մասին» N572-Ա և Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մայիսի 13 «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի տիրապետմանը, օգտագործմանն և տնօրիմանը հանձնված (ամրացված) գույքից նվիրաբերություն կատարելու մասին» թիվ 9/1 որոշումը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 597-րդ և 605-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետությունից որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի Ազատության 19 հասցեում գտնվող 10006.2 հազ.դրամ սկզբնական արժեքով 3100.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով մշակույթի կենտրոնն ու դրա սպասարկման և օգտագործման համար հատկացված 0.18135 հա հողամասը:

2. Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատից որպես հանրօգուտ նպատակով կատարված նվիրաբերություն ընդունել գույք՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«___»«___» 2013 թվականի
N ____ Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

	Անվանումը	Թողարկման տարեթիվը	Քանակը /հատ/	Միավորի արժեքը	Ընդամենը սկզբնական արժեքը	Ընդամենը մնացորդային արժեքը /դրամ/
1	Համակարգիչ					
1.1	Core 2 Duo	2008թ.	5	193 700	968 500	0
1.2	A-open int P4	2007թ.	22	261 048	5 743 056	0
	Ընդամենը		27		6 711 556	
2	Մոնիտոր					
2.1	ՀԲ Samsung 17	2008թ.	11	85 100	936 100	0
2.2	A-open 19	2007թ.	16	39336	629 376	0
	Ընդամենը		27		1 565 476	
3	Note Dell Inspiron 9400	2007թ.	6	725928	4 355 568	0
	Ընդամենը		33		12 632 600	0

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի «Երևան քաղաքային համայնքին գույք նվիրելու մասին» N572-Ա որոշման համաձայն՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին ամրացված Երևան քաղաքի Ազատության 19 հասցեում գտնվող 10006.2 հազ.դրամ սկզբնական արժեքով 3100.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով մշակույթի կենտրոնն ու դրա սպասարկման և օգտագործման համար հատկացված 0.18135 հա հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրվել է Երևան քաղաքային համայնքին:

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մայիսի 13 «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի տիրապետմանը, օգտագործմանն և տնօրիմանը հանձնված (ամրացված) գույքից նվիրաբերություն կատարելու մասին» թիվ 9/1 որոշման համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի տիրապետմանը, օգտագործմանն և տնօրիմանը հանձնված (ամրացված) գույքից, հանրօգուտ նպատակով, կատարվել է նվիրաբերություն Երևան համայնքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված: Ուստի անհրաժեշտություն է առաջացել ավագանու որոշմամբ ընդունել Երևան համայնքին հանձնվող գույքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ